ՅԺ.

Մեր նամակագիրը կ՝ամբողջացնէ իր կարևոր ծանօթութիւններով Սառաֆեան արք.ի կենսագրականը։

Գերապատիւ և Գերարգոյ Տեառն Տեառն
Ստեփանոս Վրդպ.ի Աբբայ Հօր մերոյ ողջոյն աչահամբոյր

... Սարգիս Վարդապետն ել աստի Ֆռանսըզի նաւով որ գնալ ունէր ի Մարչիլիայ, յաւուր երեքշաբաթի ի 18 սեպտեմբերի. և անտի գնալ ունի ի հռովմ, և անտի ի Վէնէտիկ. սակայն խնդրեաց ի մէնջ զհանդերձ կրօնի մերոյ վասն իւր և վասն փոքրաւորի իւրոյ՝ ծպտիլ նովաւ ի ճանապարհին, բայց մեք պատճառելով զպատճառանս ոչ տուաք, զի մի՛ տացուք տեղի ամբաստանութեան չարափառաց՝ ասել թէ սոքա փախուցին զնա, և փախուցանեն զայսպիսիս զգեցուցանելով նոցա զհանդերձս իւրեանց. և այլ ևս անպատշաճութեանց մարթ էր ծագել զորս ոչ զգացուցաք նմա, վասն որոյ կարծեմ խաթըրմնայ եղև զմէնջ սակաւ մի։ Ի ճանապարհէն գրեաց թուղթ առ ընտանիս իւր աստ, և բաժանեաց նոցա զամենայն զկահ և զկարասի տան իւրոյ. և ի թղթոյ անտի իմացան զգնալ նորա աստի, զի յառաջ քան զայն և ոչ ընտանիք և քոյր իւր գիտէին. մինչև պատրիարքն իսկ յանցեալ շաբաթուն, առաքեաց և որոնեցին զնա յանգէտս յօրթաքէօյ և ի թառապլիայ, և ոչ գտաւ։ Եւ բազում բարեկամք նորա ի հակառակորդաց ողբան զգնալ նորա, որպէս ի հարկէ խնդան թշնամիք նորա։...

Ցամի տեառն 1772
Սեպտ. 29 [*Կ. Պոլիս*]

Նուաստ ծառայ
Հ. Անանիա Վրդպ. Մ.

ՅԺԱ.

Հուսկ իր անձին շուրջ ինքը Սարգիս արք. Սառաֆեան կու գայ նախընթացներն հաստատելու և նաև հաղորդելու իր կենսագրութեանը վերջին մասերը։

Տեառն Տեառն Ստեփանոս Գերյարգելի Աբբայի
սիրով և կարօտիւ ողջոյն ի Քրիստոս Յիսուս

Ցանիցէ Վսեմութիւնդ, զի իբր երկու ամսով յառաջ երկու գիր մի զկնի միոյ ի Կոստանդնուպօլսոյ յղեցի յարգութեանդ, վասն դրամոյն իմոյ, որ անցանելոց էր այդր, և ի քեզ հասանելոց փոսթոմն Վիէնայու ձեռամբ Փէթրո Զաքարիային, մերթ հազար հինգ հարիւր ղուշ. և մերթ աւելի կամ պակաս. որոց բովանդակն լինելոց է իբր տասն և մէկ հազար ղուշ, կամ սակաւ ինչ աւելի կամ պակաս. և ակն ունիմ թէ զայդմանէ ծանուցանելոց ես ինձ ի Հռոմ ի ձեռն գրութեանդ մի ըստ միոջէ հաշուիւն հանդերձ։ Իսկ եթէ զարդենական կացութենէ մերմէ կամիս տեղեկանալ՝ ծանիր. զի ըստ հաշուի հին տօմարին, ի տասն և ութ աւուրն սեպտեմբերի ելեալ մեր ի Կոստանդնուպօլսոյ. և ի միջոցի քսան և չորս աւուրց՝ անվնաս հասաք ի նաւահանգիստն Մարչիլեայու. և այս երեք օր է որ կամք ի նազարէթն նորին. և ըստ ծիսի տեղւոյս մինչև ի լրանալ երեսուն աւուրց պարտիմք մնալ աստ, և ոչ աւելի։ Եւ զկնի ելանելոյ մեր ի նազարէթէն, կամիմ իբր հնգետասան աւուրս մնալ աստ ի Մարչիլիայ, առ ի շրջիլ ի քաղաքի և սա-